**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N<S10/18**

**Սուբսիդիա տրամադրելու մասին**

ք. Երևան «19» «հունվար» 2018թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Մանկավարժահոգեբանական աջակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետև՝ Կատարող), ի դեմս կազմակերպության տնօրեն՝ Լ. Ասրյանի, մյուս կողմից, հիմք ընդունելով «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-իթիվ 1937-Նորոշմամբ հաստատված կարգի համաձայն կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված «Հատուկ կրթություն» ծրագրով նախատեսված, հատուկ պետական չափորոշչին համապատասխան միջին տարեկան 62 սովորողի ուսուցումը կազմակերպելու համար (այսուհետ՝ ծառայություն), ընդ որում՝

1. տարրական ընհանուր կրթության գծով միջին տարեկան 14 սովորողի համար.

2. հիմնական ընդհանուր կրթության գծով միջին տարեկան 48 սովորողի համար,

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի.

2.1.1. Վերահսկել կատարողին հատկացված դրամական միջոցների օգտագործման արդյունավետությունը

2.1.2. Պահանջել կատարողից ներկայացնել եռամսյակային հաշվետվություններ սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետներում.

2.1.3. Կատարողից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին:

2.2. Կատարողն իրավունք ունի.

2.2.1. Պատվիրատուից ստանալու ՀՀ պետական բյուջեից հատկացվող գումարը սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում և կարգով:

2.3. Պատվիրատուն պարտավոր է.

2.3.1. Կատարողին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օժանդակություն և աջակցություն.

2.4. Կատարողը պարտավոր է.

2.4.1. Սովորողների ուսուցումն իրականացնել հատուկ պետական չափորոշչին և առարկայական չափորոշիչներին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և ձևով.

## 3. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրով նախատեսված ՀՀ բյուջեից պետական աջակցության առավելագույն չափը կազմում է 104610900 (մեկ հարյուր չորս միլիոն վեց հարյուր տասը հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ընդ որում՝

1. տարրական ընհանուր կրթության գծով 33218100 ՀՀ դրամ.

2. հիմնական ընդհանուր կրթության գծով 71392800 ՀՀ դրամ,

3.2. Պատվիրատուն 3.1 կետում նշված գումարը «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն փոխանցում է Կատարողի հաշվին համամասնորեն՝

ամսական կտրվածքով՝ ոչ ուշ քան տվյալ ամսվա 10-ը: Վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվին փոխանցելու միջոցով:

### 4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1.Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

### 5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ-ՀԱՆՁՆՈՒՄ

5.1.Սույն պայմանագրով նախատեսված ծառայության ընդունումը կատարվում է համաձայն հանձնման-ընդունման ակտի՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը:

### 6.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

6.1.Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե այդ իրավիճակը ստեղծվել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են. բնական աղետները, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ իրավիճակի հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

### 7.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում ստորագրման պահից, գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կամ համաձայնագիր /համաձայնագրեր/ ձևակերպելու միջոցով: Վերջիններս կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Սույն պայմանագիրը կազմված 2 էջից և հավասար իրավաբանական ուժ ունեցող 2 օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

### 8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական 2 շենք

ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն

Հ/Հ 900011340040

Հ/Հ 900011340065

ՀՎՀՀ 02512868

Աշխատակազմի ղեկավար

______________ Ն. Հարությունյան

Կ.Տ. /ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Մանկավարժահոգեբանական աջակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ

ք. Երևան, Քաջազնունի 12

«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2474702617250000

ՀՎՀՀ 01518806

Տնօրեն

Լ. Ասոյան

______________

Կ.Տ. /ստորագրություն/